[272875]-11

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«29» դեկտեմբեր 2017թ. N 171-Ա/1

«ՀՈՒՅՍԻ ԿԱՄՈՒՐՋ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՎԱՍՏԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության հավելվածի 12-րդ կետի «դ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 22-րդ կետի պահանջները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի փետրվարի 16-ի N 30-Ա/1 հրամանի համաձայն ստեղծված հանձնաժողովի կողմից 2017թ. նոյեմբերի 23-ին տրամադրված՝ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից 2017 թվականի ապրիլի 10-ին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ բաժնով նախատեսված հայտին կից փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հավաստագրել «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-

ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերության՝ երեխաների խնամքը Դիլիջան, Իջևան, Բերդ քաղաքների ցերեկային կենտրոններում:

2. Մերժել «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 2-րդ ենթակետի «ե» պարբերության՝ երեխաների խնամքը Նոյեմբերյան քաղաքի ցերեկային կենտրոնում:

3. Հանձնաժողովին՝ ապահովել սույն հրամանը եռօրյա ժամկետում կազմակերպությանն առձեռն հանձնելը կամ փոստային կապի միջոցով կազմակերպության տրամադրած հասցեով ուղարկելը:

ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2017 թվականի փետրվարի 16-ի N 30-Ա/1 հրամանով սահմանված՝ սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման գործընթացը կազմակերպելու, հավաստագրման և հավաստագրումը մերժելու մասին եզրակացություններ տրամադրելու նպատակով ստեղծված հավաստագրման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

Հանձնաժողովի նիստի ամսաթիվը՝ 23.11.2017թ. ժամը 10:00

Հանձնաժողովի նիստի վայրը՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն թիվ 3)

Հանձնաժողովի նիստին մասնակցեցին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Թադևոս Ավետիսյան – ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ,

Հանձնաժողովի անդամներ՝

Աստղիկ Մինասյան- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական աջակցության վարչության պետ,

Արամ Պետրոսյան – ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի իրավական ապահովման բաժնի պետ:

Հանձնաժողովի քարտուղար՝ Կարինե Խաչատրյան - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության գլխավոր մասնագետ:

Հանձնաժողովի նիստին հարգելի պատճառներով ներկա չէին՝

Հայկ Մուրադյանը - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի վերլուծության և մոնիթորինգի վարչության պետ,

Գեղանուշ Գյունաշյանը - ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի ընտանիքի կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետ:

Թ. Ավետիսյանը բացեց նիստը և ներկայացրեց նիստի օրակարգը: Ամփոփեց նախորդ՝ 17.11.2017թ. հանձնաժողովի նիստում տրված հանձնարարականները:

Կ. Խաչատրյանը, հանձնարարականի համաձայն, ներկայացրեց զեկուցագիր՝ նախարարություն դիմած 12 կազմակերպության սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման հանձնաժողովի որոշումների վերաբերյալ տեղեկատվություն: Միաժամանակ ներկայացրեց սուբսիդիայի տրամադրման պայմանագրով պետական աջակցություն ստացող հասարակական կազմակերպությունների ցանկը՝ կազմակերպությունների հավաստագիր ունենալու կամ չունենալու վերաբերյալ տեղեկատվությամբ:

Կ. Խաչատրյանը՝ Որոշման հավելվածի 21-րդ կետով սահմանված պահանջների կատարումն ապահովելու շրջանակներում ներկայացրեց «Լիարժեք կյանք» բարեգործական հասարակական կազմակերպության, «Երեխաների աջակցության հիմնադրամ» հասարակական կազմակերպության, «Հայ մայրեր» բարեգործական հասարակական կազմակերպության և Կայուն զարգացման նախաձեռնությունների «Աստղացոլք» հասարակական կազմակերպության սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը հավաստագրելու մասին հանձնաժողովի եզրակացությունների նախագծերը և Որոշման պահանջներին համապատասխան ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանի նախագծերը՝ սահմանված կարգով նախարարի հաստատմանը ներկայացնելու համար:

Հանձնաժողովը քննարկեց՝

1. «Հույսի կամուրջ» հասարակական» կազմակերպության /դիմել է 10.04.2017թ./ և «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության (դիմել է 05.05.2017թ.) սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը հավաստագրելու հարցը:

Ա. Կեսոյանը՝ հանձնարարականի համաձայն, մասնագիտական ուսումնասիրության արդյունքում ներկայացրեց նախնական եզրակացություն «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության՝ տարեց և (կամ) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը տնային պայմաններում սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության վերաբերյալ: Ներկայացված

եզրակացությամբ առաջարկվում էր մերժել «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության՝ տարեց և (կամ) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը տնային պայմաններում սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրումը:

Ա. Մինասյանը ներկայացրեց «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կողմից՝ «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության աշխատակիցների մասնագիտական հատուկ ուսուցման դասընթացի մասնակցության վերաբերյալ տեղեկանքի պատճենը:

Հաշվի առնելով այն, որ «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության, «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից հայտին կից ներկայացված են Որոշմաբ սահմանված փաստաթղթերը, ինչպես նաև հանձնաժողովի անդամների եզրակացություններն ու արտահայտած կարծիքները.

Հանձնաժողովը որոշեց՝

1. Հայտով ներկայացրած՝ «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը ՀՀ Լոռու և Շիրակի մարզերում՝ երեխաների խնամքը տնային պայմաններում և ՀՀ Լոռու մարզում՝ երեխաների խնամքը սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում, ենթակա է հավաստագրման:
2. Հայտով ներկայացրած՝ «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը ՀՀ Լոռու մարզում՝ տարեց և (կամ) 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց խնամքը տնային պայմաններում, ենթակա է մերժման՝ հիմք ընդունելով կազմակերպության կողմից ծառայության այս տեսակի իրականացման հնարավորությունների ուսումնասիրության արդյունքում Ա. Կեսոյանի ներկայացրած մասնագիտական եզրակացությունը:
3. «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության Դիլիջան, Իջևան, Բերդ քաղաքների ցերեկային կենտրոնների սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը ենթակա է հավաստագրման:
4. «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության Նոյեմբերյան քաղաքի ցերեկային կենտրոնի սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը ենթակա է մերժման՝ հաշվի առնելով այն, որ Նոյեմբերյան քաղաքում կազմակերպությունը դեռևս չունի ծառայության այս տեսակը մատուցելու համար անհրաժեշտ շենքային պայմաններ:

Թ. Ավետիսյանը հանձնարարեց՝

1. Ա. Պետրոսյանին՝ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշման մեջ լրացումներ կամ փոփոխություններ կատարելու նպատակով նախապատրաստել հանձնարարականի նախագիծ՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներին՝ եռօրյա ժամկետում աշխատակազմի իրավական ապահովման բաժին առաջարկություններ ներկայացնելու մասին: Ամփոփել ներկայացված առաջարկությունները և դրանք ներկայացնել իրավական ակտի նախագծի ձևով:

2. Ա. Կեսոյանին և Կ. Խաչատրյանին՝ նախապատրաստել շրջաբերական գրության նախագիծ՝ սուբսիդիայի տրամադրման պայմանագրով պետական աջակցություն ստացող, սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության համար դիմում չներկայացրած կազմակերպություններին՝ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշման 2-րդ կետով ամրագրված ժամկետի մասին տեղեկացնելու համար:

3. Կ. Խաչատրյանին՝ որոշման հավելվածի 21-րդ կետով սահմանված պահանջների կատարումն ապահովելու նպատակով կազմել «Առավոտ» բարեգործական հասարակական կազմակերպության, «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը հավաստագրելու մասին հանձնաժողովի եզրակացությունների նախագծերը, ապահովել հրամանների նախագծերի ներկայացումը ստորագրման՝ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ սահմանված կարգով:

Հանձնաժողովը փաստեց, որ 2017 թվականի նոյեմբերի 23-ի դրությամբ առկա չէ որևէ կազմակերպություն, որը սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման համար՝ 2017թ. հունվարի 1-ից հետո դիմել է նախարարություն, և որի հայտը հանձնաժողովը չի ուսումնասիրել, և համապատասխան եզրակացություն չի տրամադրվել՝ սահմանված կարգով:

Հանձնաժողովի նախագահ՝ **Թ. Ավետիսյան**

Հանձնաժողովի քարտուղար՝ **Կ.Խաչատրյան**

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը՝ երեխաների խնամքը սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնում հավաստագրելու վերաբերյալ

(ք. Երևան, Կորյունի 19ա)

Ք. Երևան «23» նոյեմբերի 2017 թ.

Ուսումնասիրելով «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Հայտատու) կողմից 2017 թվականի ապրիլի 10-ին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը ներկայացված՝ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը և կարգը հաստատելու մասին» թիվ 1078-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածի 3-րդ բաժնով նախատեսված հայտը և կից փաստաթղթերը.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ՊԱՐԶԵՑ՝

1) 2017 թվականի ապրիլի 10-ին Հայտատուի կողմից ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել հայտ՝ երեխաների խնամքը սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնի հավաստագրման համար:
2) Հայտին կից ներկայացվել են՝ ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը և կարգը հաստատելու մասին» թիվ 1078-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) հավելվածի 3-րդ բաժնով նախատեսված հայտը և կից փաստաթղթերը, բացառությամբ Նոյեմբերյան քաղաքի ցերեկային կենտրոնի՝ Որոշման հավելվածի

3-րդ բաժնի 7-րդ կետի 5-րդ ենթակետով նախատեսված՝ հավաստագրման ենթակա յուրաքանչյուր սոցիալական ծառայությունը տրամադրելու գործունեության (բացառությամբ տնային պայմաններում խնամքի տրամադրման) համար նախատեսված տարածքում պահպանիչ-հակահրդեհային ազդարարման համակարգը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության «911» ծառայությանը միացված լինելու մասին համապատասխան պայմանագրի պատճենը:

2017 թվականի նոյեմբերի 17-ին հանձնաժողովի կողմից հրավիրվել է նիստ, որտեղ հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել են հայտատուի կողմից ներկայացված հայտը, դրան կից փաստաթղթերը, ինչպես նաև քննարկվել է Հայտատուին սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման հարցը, որի արդյունքում Հանձնաժողովի կողմից կազմվել է արձանագրություն և եզրակացություն:

ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը և կարգը հաստատելու մասին» թիվ 1078-Ն որոշման հավելվածով հաստատվել է սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը և կարգը, որով սահմանվում են սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը, հավաստագրման համար պահանջվող փաստաթղթերը և պայմանները, կարգավորվում են սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման և սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրի տրամադրման հետ կապված այլ հարաբերություններ:

Որոշման հավելվածի 6-րդ կետով սահմանվում է, որ սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման համար կազմակերպությունը լիազորած մարմին է ներկայացնում հայտ և սույն կարգի 8-րդ կետում նշված փաստաթղթերը:

Որոշման 4-րդ բաժնով սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման համար նախատեսված, ի թիվս այլ պարտադիր

պայմանների, նույն բաժնի 13-րդ կետով սահմանվում է, որ հավաստագրվում են այն կազմակերպությունները, որոնք ապահովում են տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու գործունեության համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմանները, տվյալ սոցիալական ծառայություն տրամադրելու համար նախատեսված տարածքի ընդհանուր և բնակելի մակերեսին, անձնակազմին (աշխատողների թվին և հաստիքներին), նրանց աշխատանքային պայմաններին, միաժամանակյա խնամք ստացողների (բնակվողների) առավելագույն թվին, նրանց տրամադրվող սննդի չափաքանակին, դրա էներգետիկ արժեքին, հագուստի, սպիտակեղենի, կոշկեղենի, անկողնային և անձնական հիգիենայի պարագաների չափորոշիչներին, անվտանգության ապահովմանը և այլ պայմաններին ներկայացվող պահանջները:

Որոշման հավելվածի 25-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտին կից ներկայացվել են սույն կարգով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

Հանձնաժողովի անդամ Ա. Պետրոսյանի և հանձանաժողովի քարտուղար Կ. Խաչատրյանի կողմից «Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության Դիլիջան, Իջևան, Բերդ և Նոյեմբերյան քաղաքների՝ երեխաների ցերեկային կենտրոնների գործունեության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Նոյեմբերյան քաղաքում կազմակերպությունը դեռևս չունի ծառայության այս տեսակը մատուցելու համար անհրաժեշտ շենքային պայմաններ:

Ելնելով վերոշարադրյալից, հիմք ընդունելով գործող օրենսդրության պահանջները և հաշվի առնելով այն, որ Հայտատուի կողմից հայտին կից՝ որոշմամբ պահանջվող բոլոր փաստաթղթերը ներկայացվել են, ինչը Որոշմամբ սահմանված իրավակարգավորումների շրջանակներում հիմք է հանդիսանում Հայտատուի կողմից նախարարություն ներկայացված՝ սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը Դիլիջան, Իջևան և Բերդ քաղաքներում հավաստագրելու համար և ղեկավարվելով Որոշման 21-րդ կետի պահանջներով.

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵԶՐԱԿԱՑՐԵՑ՝

«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացված՝ Դիլիջան, Իջևան, Բերդ քաղաքների ցերեկային կենտրոնների սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը ենթակա է հավաստագրման:

«Հույսի կամուրջ» հասարակական կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ներկայացված՝ Նոյեմբերյան քաղաքի ցերեկային կենտրոնի սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեությունը ենթակա է մերժման, քանի որ Նոյեմբերյան քաղաքում կազմակերպությունը դեռևս չունի ծառայության այս տեսակը մատուցելու համար անհրաժեշտ շենքային պայմաններ:

Սույն եզրակացությունը վերոնշյալ որոշմամբ սահմանված ժամկետում տրամադրել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին:

Հանձնաժողովի նախագահ՝		**Թ. Ավետիսյան**
Հանձնաժողովի քարտուղար՝		**Կ. Խաչատրյան**
Հանձնաժողովի անդամներ՝		**Ա. Կեսոյան**
		Ա. Պետրոսյան
		Ա. Մինասյան